

եւ երբեմն նաեւ մոլեռանդ ըլլալու: Այսպէս կը տարածուի թուրք լեզուն, զոր արդէն իբր պետական լեզու կը ստիպուին արք սորվիլ: Համէնի եւ Սեւ-Գետի կզզիացեալ դիրքը, ասոնց հին հակակրութիւնը մահմետական լազին եւ յոյնն ու թուրքին հանդէպ, որոնց հետ խնամո-լեւան կապեր չեն հասարակեր, կրցած է այս գաւառները պահել վերջնական թրքացմանէ եւ հայ լեզուն՝ բոլորովին կորսուել: Ասի պիտի պատահի սակայն օր մը, եթէ շարունակեն արդի պայմանները եւ թուրք մահմետական բռնապետական վարչութիւնը, ինչպէս նոյնը պատահած է անթիւ ուրիշ տեղեր, ուր հայ եւ յոյն եւ ուրիշ ազգեր գոնէ արտաքուստ լիովին թրքացած են՝ նախ մահմետականալէն ետքը: Ի հարկէ նաեւ ուրիշ տեղերու ալ շարք մը կայ, ուր «թրքութիւնը» միայն արտաքուստ է:

Ուրիշ բռնութեանց շնորհիւ է որ այսօր կան ընդարձակ աշխարհներ, ուր մանաւանդ յոյն եւ հայ ժողովուրդը, թէեւ կրցած է քրիստոնեայ մնալ, թրքախօս եղած է, այնպէս որ թուրքերէնն ընտանեկան լեզու եղած է. ինչպէս որ ու-